

5.4. Թերթերի, ամսագրերի, գրքերի, բրոշյուրների հրատարակումները 2001թ.

Ըստ ՀՀ Ազգային գրապալատի ամփոփ տեղեկատվության, 2001թ. լույս է տեսել 82 անուն թերթ, որոնցից 72-ը՝ հայերեն, 8-ը՝ ռուսերեն, 1-ական՝ անգլերեն և ուկրաիներեն: Ամենօրյա թերթերի անվանացանկը 2000թ. համեմատ նվազել է 25%-ով և կազմել 6, բոլորն էլ հայերեն լեզվով, ոչ ամենօրյա թերթերի անվանացանկը՝ 8.4%-ով և կազմել 76:

Թերթերի հրատարակությունն ըստ պարբերականության և լեզուների

	Ընդամենը		Պարբերականությունը									
			ամենօրյա թերթեր /շաբաթական առնվազն 4 անգամ/		ոչ ամենօրյա թերթեր		այդ թվում					
	2000	2001	2000	2001	2000	2001	շաբաթը 2 կամ 3 անգամ		շաբաթը 1 անգամ		շաբաթը 1 անգամից պակաս	
	2000	2001	2000	2001	2000	2001	2000	2001	2000	2001	2000	2001
Անվանատեսակների քանակը	91	82	8	6	83	76	5	9	31	29	47	38
այդ թվում՝ հայերեն	74	72	8	6	66	66	3	7	21	22	42	37
ռուսերեն	15	8	-	-	15	8	2	2	8	6	5	5
անգլերեն	2	1	-	-	2	1	-	-	2	1	-	-
ուկրաիներեն	-	1	-	-	-	1	-	-	-	-	-	1

Թերթերի միանվագ տպաքանակը կազմել է 308 հազ. օրինակ, որի 80.8%-ը բաժին է ընկել հայերեն, 18.8%-ը՝ ռուսերեն լեզուներով թերթերին: Մեկ թերթի միանվագ միջին տպաքանակը կազմել է 3756 օրինակ: Թերթերի ընդհանուր տարեկան տպաքանակը կազմել է 18509 հազ. օրինակ, որի 80.3%-ը բաժին է ընկել հայերեն, իսկ մնացածը՝ ռուսերեն թերթերին: Մեկ թերթի տարեկան միջին տպաքանակը կազմել է 225719 օրինակ:

2001թ. հրատարակվել են 64 անուն ամսագրեր և այլ պարբերականներ, որոնց 68.8%-ը բաժին է ընկել հայերեն, 14.1%-ը՝ ռուսերեն, մնացածը՝ այլ լեզուներով պարբերականներին:

Ամսագրերի և այլ պարբերականների հրատարակությունն ըստ պարբերականության և լեզուների

	Ընդամենը		Պարբերականությունը											
			ամիսը 2-4 անգամ		տարեկան 8-12 անգամ		տարեկան 5-7 անգամ		տարեկան 2-4 անգամ		տարեկան 1 անգամ		անկանոն	
	2000	2001	2000	2001	2000	2001	2000	2001	2000	2001	2000	2001	2000	2001
Անվանատեսակների քանակը	44	64	3	7	15	12	1	7	22	29	1	-	2	9
այդ թվում՝ հայերեն	32	44	3	7	12	10	1	5	14	16	1	-	1	6
ռուսերեն	8	9	-	-	2	-	-	-	6	7	-	-	-	2
անգլերեն	1	2	-	-	1	-	-	-	2	2	-	-	-	-
հայ-ռուսերեն	3	8	-	-	-	2	-	2	2	3	-	-	1	1
հայ-անգլերեն	-	1	-	-	-	-	-	-	1	-	-	-	-	-

Ամսագրերի և այլ պարբերականների միանվագ տպաքանակը կազմել է 45 հազ. օրինակ, որի 71.1%-ը բաժին է ընկել հայերեն, 11.1%-ը՝ ռուսերեն, 11.1%-ը՝ անգլերեն, 6.7%-ը՝ այլ լեզուներով ամսագրերին և այլ պարբերականներին: Մեկ ամսագրի և պարբերականի միանվագ միջին տպաքանակը կազմել է 703 օրինակ: Ամսագրերի և այլ պարբերականների ընդհանուր

5. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

տարեկան տպաքանակը կազմել է 272 հազ. օրինակ, որի 84.9%-ը բաժին է ընկել հայերեն, 3.7%-ը՝ ռուսերեն, 1.8%-ը՝ անգլերեն, իսկ մնացածը՝ այլ լեզուներով ամսագրերին և այլ պարբերականներին: Մեկ ամսագրի և պարբերականի տարեկան միջին տպաքանակը կազմել է 4250 օրինակ:

Գիտությանը, տեխնիկային, գիտական հետազոտություններին վերաբերող հատուկ ամսագրերի անվանատեսակների քանակը կազմել է 19, քաղաքական, հոգևոր և մշակութային հրատարակություններինը՝ 12:

2001թ. հանրապետությունում հրատարակվել է 746 անուն գիրք (735-ն՝ առաջին հրատարակությամբ) և 147 անուն բրոշյուր (146-ն՝ առաջին հրատարակությամբ): Հրատարակված գրքերի 5.2%-ը կամ 39-ը դպրոցական դասագրքեր են, 2.3%-ը կամ 17-ը՝ մանկական գրականություն, ընդ որում բոլորն էլ՝ առաջին հրատարակությամբ: Հրատարակված գրքերից և բրոշյուրներից 700 անունը տպագրվել է հայերեն, 106-ը՝ ռուսերեն, 21-ը՝ անգլերեն, 3-ը՝ գերմաներեն, 2-ը՝ իտալերեն, 1-ը՝ իսպաներեն, 60-ը՝ երկու և ավելի լեզուներով:

2001թ. գրքերի և բրոշյուրների օրինակների ընդհանուր տպաքանակը կազմել է 945 հազար, որից գրքերինը՝ 747 հազար, բրոշյուրներինը՝ 198 հազար: Մեկ գրքի տարեկան միջին տպաքանակը կազմել է 1001 օրինակ, իսկ մեկ բրոշյուրինը՝ 1347 օրինակ: